

**ՀՀ ֆինանսների նախարարություն  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/2**

**1 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Տաթևկ Բաղայանի 03.06.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 22.05.2014 թ-ի թիվ 2125736 ստուգման ակտի դեմ:

**Ա/Ձ Տաթևկ Բաղայանի գանգատում բերված փաստարկները.**

16.04.2014 թ-ի թիվ 2125736 հանձնարարագրով Ա/Ձ Տաթևկի Բաղայանի մոտ ՀԴՄ-ի կիրառման ճշտության ստուգումն իրականացվել է խախտումներով, որի համար ներկայացվում են առարկություններ 22.05.2014 թ-ին կազմված թիվ 2125736 ակտի վերաբերյալ:

06.05.2014 թ-ին խանութից հաճախորդը 890 դրամի գնում կատարելուց և ՀԴՄ կտրոն ստանալուց հետո նորից որոշել է գնում կատարել, որի համար նրան ցուցապահարանի մոտ ցույց է տրվել նրա պահանջած ապրանքների մի քանի նմուշներ, որից 1 հատ ընտրելուց հետո դրա համար հասանելիք 300 դրամը ցուցապահարանին դնելով հեռացել է խանութից: Մինչև վաճառողի վաճառասեղանին մոտենալը և առևտրի գրանցելը շատ արագ ներս է մտել հարկային տեսուչը, ներկայացել է, և հնարավորություն չտալով վաճառողին առևտուրը ՀԴՄ-ով գրանցելու, արագ հանել է Z հաշվետվությունը: Այդ ընթացքում և դրանից հետո գնում կատարող անձը չի մտել խանութ, չի ներկայացել որպես հանձնարարագրով լիազորված անձ և ներկա չի եղել արձանագրության կազմմանը ոչ որպես հարկային տեսուչ, ոչ որպես ընթերակա: Գնորդի ով լինելը մինչ օրս հայտնի չէ: Կատարված գործողությունների արագությունը հիմք է տալիս կասկածելու, որ դա պլանավորված գործողություն է, այլ ոչ թե կոնկրետ բաց թողում Ա/Ձ-ի աշխատանքում: Հարկային տեսուչի կողմից արձանագրությունը կազմելուց հետո, ըստ գործող կարգի, հետ է պահանջվել ապրանքի դիմաց վճարված 300 դրամը, որն ինքը չէր վճարել:

Ըստ գանգատի, պետք է հետ պահանջվեր նաև դրանից 1 /մեկ/ րոպե առաջ նույն անհայտ գնորդի կողմից կատարված գնման 890 դրամը, որի դիմաց տրվել է ՀԴՄ կտրոն, ինչը չի կատարվել: Նշվածը հիմք է տալիս կասկածելու, որ գնում կատարած անձը հանձնարարագրով լիազորված հարկային տեսուչ չէր և նրա բացակայությամբ կազմված արձանագրությունը ևս անհիմն է:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 16.04.2014 թ-ի թիվ 2125736 հանձնարարագրի Ա/Ձ Տաթևկ Բաղայանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մքեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 22.05.2014 թ-ի թիվ 2125736

ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Արմեն Մելիք-Ստեփանյանի կողմից 06.05.2014 թ-ին ժամը 17:30-ին ք.Երևան, Մոլդովական 15/3 հասցեում գտնվող շինանյութի խանութից կատարվեց հսկիչ գնում 300 դրամի չափով՝ 1 հատ պաստառապատ սայրադանակ 300 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառող Արսեն Թունյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17:35-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 4500 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 300 դրամը, ժամը 17:35-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 17:35-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 300 դրամ ընդհանուր գումարով: ՀԴՄ-ի ժամը չէր համապատասխանում իրականությանը:

Գնված ապրանքները տնտեսավարող սուբյեկտը հրաժարվեց ետ ստանալուց և հսկիչ գնման գումարը վերադարձնելուց, ինչի վերաբերյալ կազմվել է արձանագրություն:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում, «Հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում Ա/Ձ Տաթևկ Բադալյանի լիազոր ներկայացուցիչը նշեց, որ ստուգման ակտում նշված ապրանքի դիմաց գումարը վաճառասեղանին թողնելով գնորդն անմիջապես փորձել է դուրս գալ խանութից և հենց այդ պահին ներս է մտել հարկային տեսուչը ու չսպասելով, որպեսզի վաճառողը գումարը մուտքագրի ՀԴՄ, դուրս է բերել «Z» հաշվետվություն:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք պնդեցին, որ Ա/Ձ Տաթևկ Բադալյանի լիազոր ներկայացուցչի վերոգրյալ պնդումները չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, հարկային տեսուչ Արմեն Մելիք-Ստեփանյանը նշեց, որ 06.05.2014 թ-ին ժամը 17:30-ին ք.Երևան, Մոլդովական 15/3 հասցեում գտնվող շինանյութի խանութից իր կողմից գնվել է պաստառապատ սայրադանակ, որի դիմաց վաճառող Արսեն Թունյանին է վճարել 300 դրամ: Այնուհետև, Արմեն Մելիք-Ստեփանյանը դուրս է եկել խանութից և մոտավորապես 3-4 րոպե հետո ներս է մտել ստուգումն իրականացնող մյուս տեսուչը և ՀԴՄ-ից դուրս է բերել «Z» հաշվետվություն:

Ստուգումն իրականացրած անձինք նշեցին նաև, որ իրականությանը չի համապատասխանում լիազոր ներկայացուցչի պնդումներն այն մասին, որ մինչև ստուգման ակտում հիշատակված գնումը կատարելը նույն գնորդի կողմից գնվել է 890 դրամի ապրանք, որի դիմաց տրամադրվել է ՀԴՄ կտրոն: Հարկային տեսուչ Արմեն Մելիք-Ստեփանյանը պնդեց, որ իր կողմից ստուգման ակտում նշված ապրանքից բացի այլ գնում չի կատարվել:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության, ինչպես նաև կողմերի բերված փաստարկների գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում իրականացված ստուգմամբ հիմնավորվել է ստուգումն իրականացնող անձի կողմից գնված ապրանքի դիմաց ՀԴՄ կտորն չտրամադրելու փաստը: Այսինքն, Ա/Ձ Տաթևկ Բադալյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ինչ վերաբերվում է Ա/Ձ Տաթևկ Բադալյանի լիազոր ներկայացուցչի վերոգրյալ պնդումներին, ապա դրանք ըստ էության չեն կարող հիմնավոր համարվել, քանի որ, նախ լիազոր ներկայացուցիչը ստուգման պահին ներկա չի եղել, և երկրորդ, վերջինիս կողմից չեն ներկայացվել այդ պնդումները հիմնավորող ապացույցներ: Մասնավորապես, լիազոր ներկայացուցիչը հայտարարեց, որ խանութը տեսանկարահանվում է, սակայն երբ Հանձնաժողովն առաջարկեց ներկայացնել ստուգումը կատարելու օրվա տեսագրությունը, պարզվեց, որ այն չի պահպանվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝**

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

**Հանձնաժողովի նախագահի օ/պ**



**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**